ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Պատմական սկզբնաղբյուրների օգտագործումը «Վահանանց պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքում »- թեմայով

Կատարող՝ Նինա Մխիթարյան

(ուսանողի անուն, ազգանուն)

Ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Արշավիր Գասպարյան
(անուն, ազգանուն, գիտական աստիճան, կոչում) (ստորագր.)

Գնահատում եմ_____միավոր

«___»_____2023թ _____
(ղեկավարի ստորագրությունը)

Գյումրի 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……..... 4

Գլուխ 1

Պատմական փաստաթղթերի ուսուցումը պատմության դասավանդման ընթացքում: Փաստաթղթերը որպես գիտելիքի սկզբնաղբյուր……6

Գլուխ 2

Պատմական սկզբնաղբյուրների օգտագործումը Վահանանց պատերազմ թեմայի դասավանդման ընթացքում……..……..…….……13

Եզրակացություն……..……..22

Օգտագործված գրականության ցանկ……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքում մենք փորձում ենք ներկայացնել պատմական սկզբնաղբյուրների օգտագործման նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում, և ավելի կոնկրետ «Վահանանց պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքում: Ներկայացնելու ենք, թե ինչ կարևոր նշանակություն ունի ուսուցչի և աշակերտների աշխատանքը սկզբնաղբյուրների հետ, որը նպաստելու է պատմության նկատմամբ աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների աճին: Անցկացնելու ենք «Վահանանց պատերազմը» թեմայով դաս, որը հիմնված է լինելու սկզբնաղբյուրների հետ աշխատանքի վրա:

Աշխատանքի **նպատակն է՝** ներկայացնել պատմական սկզբնաղբյուրների օգտագործման նշանակությունը պատմության դասավանդման՝ մասնավորապես«Վահանանց պատերազմը» թեմայի դասավանդման ընթացքում:

Խնդիրներն են.

1. ՈՒսումնասիրել պատմական փաստաթղթերի դերն ու նշանակությունը պատմության դասավանդման ընթացում, ներկայացնել փաստաթղթերը որպես գիտելիքների սկզբնաղբյուր:
2. Ցույցտալ, թե ինչ նշանակություն ունեն սկզբնաղբյուրները «Վահանանց պատերազմը» թեման ուսումնասիրելու համար:
3. Ներկայացնել սկզբնաղբյուրների հետ աշխատանքի դերը պատմության դասավանդման ընթացքում:

Թեմայի արդիականությունը: Արդի պայմաններում սկզբնաղբյուրների օգտագործման դերն ու նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում ունի մեծ արդիականություն: Երբեմն պատմության դասընթացի ժամանակ անտեսվում են սկզբնաղբյուրների դերն ու նշանակությունը, որի պատճառով սովորողները զրկվում են պատմության ուսումնասիրման ամենահետաքրքիր մեթոդներից մեկից՝ սկզբնաղբյուրների հետ աշխատանքից: Սովորողները զրկվում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու և դարաշրջանի առանձնահատկությունները հասկանալու հնարավորությունից: Դրա համար

անհրաժեշտ է նոր փաստերով ապացուցել և ամրապնդել այն, որ սկզբնաղբյուրների օգտագործման մեթոդիկան պատմության դասավանդման ընթացքում իր կարևորությամբ չի զիջում այլ մեթոդների, այլ ընդհակառակը նույնիսկ գերազանցում է: Սկզբնաղբյուրի հետ աշխատանքի ընթացքում ավելի են խորանում, որոշակիանում սովորողների գիտելիքները,նրանց մասնակից դարձնում դարաշրջանի իրադարձություններին, ձևավորում աշակերտների մոտ կարծիք և բանավեճի հնարավորության ընձեռում: Անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները և հետաքրքրությունները, և ցանկացած մեթոդ կթողնի ցանկալի արդյունք:

Գրականության տեսություն: Աշխատանքի ժամանակ օգտագործել ենք մասնագիտական հարուստ գրականություն, ինչպես օրինակ սկզբնաղբյուրներից՝ Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն», Սեբեոսի «Պատմություն» աշխատությունները, գիտական ուսումնասիրություններից օգտվել ենք՝Հ. Գ. Պապոյանի«Հայոց պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում», Հ. Ղևոնդյան «Պատմության դասավանդման մեթոդիկա», Ե. Վյազեմսկու և Օ. Ստրելովի «Պատմության դասավանդման մեթոդիկա», Ա. Վագինի «Պատմության դասավանդման մեթոդիկան միջին դասարաններում», Մ. Ստուդենիկինի «Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում»:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ:

Գրավոր փաստաթղթերի օգտագործման նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում: Պատմության դասավանդման ընթացքում անգնահատելի դեր են կատարում պատմական փաստաթղթերը, որոնց թվին են պատկանում այն ամենը, ինչը անցյալում ստեղծել է մարդկությունը, այդ թվում նրա փոխհարաբերությունները շրջակա միջավայրի հետ, ինչպես նաև սովորույթները, տարազը, գրավոր աղբյուրները, իսկ ավելի լայն իմաստով գրավոր աղբյուրները պատմության դասվանդման մեթոդիկայում կոչվում են փաստաթղթեր[1]:

Դեռևս 1863 թ. պրոֆեսոր Մ.Մ. Ստասյուլևիչն արտահայտել է հետևյալ միտքը, որ սովորողների պատմական գիտելիքների զարգացման համար մեծ նշանակություն ունի սովորողների անմիջական ծանոթությունը պատմական փաստաթղթերին, քան աշխատանքը միայն դասագրքի հետ: Դրա համար նա առաջարկում էր դասը անցկացնել փաստացի մեթոդով, հիմնված սկզբնաղբյուրների հետ աշխատանքի վրա[2]:

20-րդդարի սկզբին Ստասյուլևիչի գաղափարները ավելի է զարգացնում Ն. Ռոժկովը, նա քարոզում էր գործնական մեթոդով պատմության ուսումնասիրումը՝ հիմնված սկզբնաղբյուրների վրա[3]:

Մի շարք մեթոդիստներ ևս (Կովալևսկի, Հարտվիգ, և ուրիշներ) 19-րդ դարում առաջ քաշեցին գործնական պարապմունքների խնդիրը և գտնում էին, որ սովորողների ինքնուրույն գիտելիքների ձեռքբերման հիմքում պետք է ընկած լինեն փաստաթղթերը: Սակայն մեթոդիստների և մանկավարժների մեծ մասը իրավմամբ

---

[1]Պապոյան Հ.Գ., Պատմության դասավանդման մեթոդիկա դպրոցում, Երևան, 2013, էջ 171:

[2] Студеникин М.Т., Методика переподавания истории в школе, Москва, 2000, с.317.

[3] Вагин А.А., Методика преподавания истории в средней школе, Москва, 1968, с.276.

գտնում է, որ չի կարելի բոլոր դասերը կառուցել փաստաթղթերի ուսուցման հիմքի վրա: Փաստաթղթերը պետք է հանդիսանան որպես օգնող, լիացնող միջոց սովորողների պատմական հիմնական աղբյուրին՝ ուսուցչի պատումին և դասագրքին[4]:

Փաստաթուղթը կոչված է միայն խորացնելու, հստակեցնելու և տալու սովորողների գիտելիքներին ավելի կենդանի պատկեր, հասկանալու ժամանակաշրջանի պատմական յուրահատկությունը: Այսպիսով կարող ենք ասել, որ փաստաթուղթը անհրաժեշտ է ոչ թե դպրոցական դասընթացի ընդլայնման, այլ դրա հստակեցման, խորացման և ճշգրտման համար: Գործնական մեթոդի կողմնակիցները ենթադրում են, որ փաստաթղթի ուսումնասիրում ըպետք է նախորդի դասագրքի աշխատանքին, իսկ մեթոդիստների մի մասն էլ առաջարկում է փաստաթուղթը օգտագործել միայն դասագրքում համապատասխան պարագրաֆը կարդալուց հետո[5]:

Ի՞նչ նշանակություն և կարևորություն ունի պատմության դասին պատմական փաստաթղթի օգտագործումը: Նրանց օգնությամբ իրականացվում է զննականության չափորոշիչները պատմության դասվանդման ընթացքում, երբ սովորողները ծանոթանում են դրանց ներքին բովանդակությանը: Փաստաթուղթը ուսուցչի կողմից դասի պարզաբանումը դարձնում է կենդանի ու վառ, իսկ եզրակացությունները կայուն և համոզիչ:[6]:

Փաստաթղթի հետ աշխատանքը ակտիվացնում է սովորողների մտածողությունն ու պատկերացումները, նպաստում պատմական գիտելիքների ավելի արդյունավետ յուրացմանն ու պատմական գիտակցության և տրամաբանության զարգացմանը: Սովորողների մոտ ձևավորվում են ինքնուրույն աշխատանքի հմտություններ, դատողություն, կարդալ փաստաթղթերը, վերլուծել տեղեկատվությունները, գնահատել անցյալի փաստաթղթերի դերը ներկան և

---

[4]Պապոյան Հ.Գ., էջ 173:

[5] Студеникин М.Т.,с.318:

[6] Глазырина Т.Н., Методика преподавания истории, Новополоцк, 2011, с.116.

ապագան հասկանալու համար: Դասի ընթացքում սովորողները իմանում և գնահատում են փաստաթղթի նշանակություն ըպատմականգիտության մեջ[7]:

Անհրաժեշտ է նշել նաև փաստաթղթերի հետ աշխատանքի ևս մեկ կարևոր կողմ. Փաստաթղթի հետ պրակտիկ աշխատանքի շնորհիվ սովորողները ծանոթանում են նաև պատմական հետազոտման մեթոդներին: Դեռևս 30-ական թվականների վերջին Բերնադսկին այդ մասին գրել է. «Օգտագործելով փաստաթուղթը պատմութրան դասավանդման ժամանակ, ուսուցիչը ծանոթացնում է սովորողներին պատմականգիտության ուսումնասիրման մեթեդներին և աղբյուրներին ու միաժամանակ օժանդակում մոտեցումը պատմությանը որպես ուսումնական առարկա և որպեսգ իտություն»[8]:

Անշուշտ, թե միջին դասարաններում, թե նույնիսկ ավագ դասարաններում, խոսքը կարող էգնալ միայն տարրական հետազոտական աշխատանքի մասին՝ փաստաթղթերի հետ:

Պատմական փաստաթղթերի տեսակները և դասի ժամանակ նրանցը ընտրության չափանիշները: Կիրառվող պատմական փաստաթղթերի դասակարգումը պատմության ուսուցմանը նթացքում շատ ավելի հեշտ է, քան պատմական գիտության մեջ: Այն հիմնված է վավերագրական նյութի բնույթի վրա: Նրանք բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ 1.պատմողանկարագրական-գրական, 2. Ակտիվ բնույթի կամ վավերագրական, որոնք իրենց ժամանակին ունեցել են գործնական նշանակուրյուն: Լրացուցիչ խումբ են կազմում գեղարվեստական հուշարձանները և էպիգրաֆիկ պատմական փաստաթղթերը:

Այս փաստաթղթերը որպես անցյալի անմիջական հիշատակարաններ՝ օժտված են համոզելու մեծ ուժով, նրանք անցած կյանքի վկաններն են և զարգացնում են սովորողների երևակայությունը, հրապուրում նրանց, սովորեցնում վերլուծել և մտածել պատմական տվյալ փաստաթղթի բովանդակության մասին[9]:

1.**Պատմողանկարագրական**- գրական՝ դրանք բոլոր տեսակի տարեգրություններն են, հիշողությունները, պամֆլետները, նամակները, հոդվածները, տարբեր

---

[7] Вагин А.А., с. 277:

[8] Глазырина Т.Н., с. 118:

[9] Студеникин М.Т., с.320:

ժամանակագրություններ, ճանապարհորդների և ականատեսների նկարագրություններ և այլն:

2. **Ակտիվ բնույթի**–վավերագրական փաստաթղթեր կամ աղբյուրներ. Դրանք զանազան խնդրագրերեն, գրագրություններ, հրովարտակներ, պայմանագրեր, օրենքների ժողովածուներ, արձանագրություններ (ակտեր), իրավական փաստաթղթեր, դատաքննչական գործերը, իրավականգ ործարքներ, կտակներ և այլն: Այս տիպի փաստաթղթերը բացահայտում են տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունները, հասկացողությունները: Սրանք սովորողների կողմից ավելի դժվար են ընկալվում և անհրաժեշտ է ուսուցչի համապատասխան վերլուծությունը, մեկնաբանությունը:

3. **Էպիգրաֆիկ պատմական փաստաթղթեր**. Դրանք ունեն էպիգրաֆիկ բնույթ, գրված են ամեն տեսակի առարկաների վրա, հիմնականում արձանագրություններ են, տապանագրեր և այլ նյութեր: Օրինակ՝ Արգիշտի 1-ի թողած սեպագիր արձանագրությունը:

4. Գեղարվեստական խոսքի հուշարձաններն են ժողովրդական բանավոր ստեղծագործությունները (էպոս, առասպելները, առակները, երգերը, թևավոր արտահայտությունները)[10]:

Փաստաթղթերը պետք է բավարարեն հետևյալ պայմաններին՝

1. Այն պետք է համապատասխանի պատմության ուսուցման նպատակներին:
2. Արտացոլի տվյալ դարաշրջանի հիմնական առավել տիպիկ փաստերն ու իրադարձությունները:
3. Օրգանապես կապված լինի ծրագրային նյութի հետ, նպաստի գիտելիքների արդիականացմանը, որը հնարավորություն կտա ուսուցչին՝ սովորողներին առաջարկելու ճանաչողական բնույթի հարցեր և առաջադրանքներ:
4. Հասանելի լինի սովորողներին ի րծավալով և բովանդակությամբ, լինի հետաքրքիր, պարունակի կենցաղային և թեմատիկ մանրամասներ, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել շերտավորված ուսուցում, որոշակիացնել սովորողների պատկերացումները այս կամ այն

[10]Ղևոնդյան Հ., էջ 115:

իրադարձության, երևույթի, գործընթացի վերաբերյալ և ունենա սովորողների վրա որոշակի զգացմունքային ազդեցություն:

5. ՈՒնենա գիտական արժանահավատություն, պարունակի հավաստի տեղեկատվություն, որը կնպաստի սովորողների ինքնուրույն ճանաչողական զարգացմանը, հետաքրքրությունների աճին[11]:

ՈՒսուցչի և սովորողների աշխատանքը փաստաթղթերի հետ: Փաստաթղթերի ուսուցման մեթոդիկան: Պատմության դասերի ընթացքում փաստաթղթերը կարող են օգտագործվել ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողների կողմից: ՈՒսուցիչը վերապատմում է փաստաթուղթը, եթե այն սովորողների համար բարդ է, բերում է որոշակի հատվածներ, որպեսզի հիմնավորի իր պատմածը: Նա ընթերցում և տարբերակում է փաստաթղթի գաղափարները՝ իր խոսքը որոշակիացնելու և զգացմունքային ու համոզիչ դարձնելու համար[12]:

Գոյություն ունեն փաստաթղթերի հետ աշխատելու հետևյալ մեթոդները. Փաստաթղթերի մի մասը ուսուցիչը կարող է օգտագործել միայն նոր նյութի հաղորդման ժամանակ, և պետք չէ այն հանձնարարել աշակերտներին: Իսկ կան փաստաթղթեր, որոնց վրա պետք է դասարանում աշխատանք կազմակերպել՝ կարդալ, վերլուծել, վերհանել հիմնական գաղափարները: Առավել մատչելի փաստաթղթերը պետք է հանձնարարել տանը՝ որպես ինքնուրույն տնային աշխատանք:

Բոլոր տիպի փաստաթղթերի նկատմամբ պետք է հանդես բերել քննադատական վերաբերմունք, քանի որ դրանք միշտ չէ, որ ժամանակաշրջանը ճիշտ են արտացոլում, քանի որ այդ փաստաթղթերից ամեն մեկի հեղինակը արտացոլել է իր դասակարգի շահերը, հետևաբար, ուսուցիչը ճիշտ ընտրություն պետք է կատարի: Այն փաստաթղթերը, որոնք միայն հարստացնում են ուսուցչի գիտելիքները, կոնկրետացնում, որոշակի են դարձնում պատմական այս կամ այն երևույթի էության ըմբռնումն ու բնութագրումը, համոզիչ են դարձնում ուսուցչի խոսքը, պարզ է, չի հանձնարարվում աշակերտներին: Իսկ հանձնարարվելիք

---

[11] Вяземский Е.Е., СтреловаО.Ю., Теория и методика переподавания истории, Москва, 2003, с.189:

[12] Глазырина Т.Н., с.119:

փաստաթղթերի վրա աշխատելիս սկզբում ուսուցիչը ակտիվ դերում է լինում, իսկ հետագայում զգալի մասը թողնում է սովորողներին, իբրև ինքնուրույն աշխատանք, որը ստանում է հետազոտական աշխատանքի բնույթ:

Հաճախ են ուսուցիչները դասի ժամանակ կիրառում պատմողանկարագրական բնույթի փաստաթղթեր: Օրինակ՝ ուսուցիչը դասի բացատրման ժամանակ իր խոսքից առանձնացնում է Ժաննա դը Վենետտայի մասին հատվածը և պատմում է այն դժվարությունների մասին, որը կրում էր Ֆրանսիան Հարյուրամյա պատերազմի ընթացքում: Գեղարվեստական նկարագրության ավարտից հետո նա միանգամից անցնում է իր բաց թողած մտքին, որը շատ տպավորիչ է դարձնում նրա խոսքը:

Սովորողների աշխատանքը փաստաթղթերի հետ աստիճանաբար դժվարանում է՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, ճանաչողական հնարավորությունները և նախապատրաստվածության աստիճանը: 6-7-րդ դասարաններում օգտագործում են բավական դյուրին բնույթի պատմողանկարագրական նյութեր, որոնց ծավալը չպետք է գերազանցի 10-15 տողը, 8-9-րդ դասարաններում մեծանում է վերլուծական բնույթի տնտեսական և իրավաբանական փաստաթղթերի քանակը, 10-12-րդ դասարաններում ավելի ու ավելի շատ են ընդգրկվում քաղաքական և ծարագրային փաստաթղթերը[13]:

Փաստաթղթի հետ աշխատանքը ներառում է հետևյալ փուլերը.

1. Ուսուցիչը տալիս է փաստաթղթի վերլուծված կրկնօրինակը,
2. Սովորողները վերլուծում են փաստաթուղթը ուսուցչի ղեկավարությամբ,
3. Սովորողները աշխատում են ուսուցչի ղեկավարությամբ կամ ինքնուրույն,
4. Ինքնուրույն ուսումնասիրում են փաստաթուղթը դասարանում և տանը:

ՈԻսուցիչը դասարանում սովորողներին ծանոթացնում է փաստաթղթի հետ և բացատրում հանձնարարության էությունը: Տանը սովորողները փաստաթղթի հիման վրա պատրաստում են ոչ մեծ հաղորդագրություն[14]:

Փաստաթղթի հետ աշխատանքն ընդգրկում է նաև ընթերցանությունը, փաստաթղթի պատմելը, բացատրական ընթերցանությունը՝ նախնական և

---

[13]Պապոյան Հ.Գ., էջ 174:

[14]Студеникин М.Т., с.321:

վերջնական զրույցով, փաստաթղթի ինքնուրույն վերլուծությունը և հարցերին պատասխանելը, երկու՝ միմյանց լրացնող փաստաթղթերի համեմատումը, փաստաթղթերի քննադատական վերլուծությունը: Այս ամենից հետո ուսուցիչը առաջարկում է կարդալ փաստաթղթի այն մասերը, որոնք վերաբերում են դասի որոշակի մասերին:

Ավագ դպրոցում փաստաթղթերի հետ աշխատանքը դժվարանում է, սովորողներին տրվում են ավելի բարդ առաջադրանքներ.

1. Փաստաթղթի բովանդակությունից ընտրել գլխավորը, երկրորդականը և հիմնավորել դրանք,
2. Մտածել՝ ինչպիսի պատմական պայմաններ նպաստեցին տվյա լիրադարձությանը, երևույթի, գաղափարի, բարենորոգման իհայտ գալուն,
3. Համեմատել պայմանները, վավերագրական փաստաթղթից ընտրել տվյալները,
4. Տալ պետական և քաղաքական գործիչների բնութագիրը և սկզբնաղբյուրի վերաբերյալ նախապատրաստել հաղորդագրություն,
5. Մտածել՝ ուսումնասիրված փաստաթուղթը ինչպես կարող էօ գնել՝ հասկանալու ժամանակակից հասարակական երևույթները[15]:

Դասի ընթացքում՝ մինչև փաստաթղթերին անդրադառնալը, ուսուցիչը նշում է նրա հակիրճ բնութագիրը, երբ և ում կողմից է այն կազմվել և ինչ նպատակներով, ինչ են սովորողները իմանալու դրանից: Նրանք կարդում են փաստաթուղթը մաս-մաս, իսկ ուսուցիչը բացատրում է անհասկանալի արտահայտություններն ու դարձվածքները, փաստաթղթի բովանդակության ընկալման աստիճանը ստուգելու համար նրանց ուղղում է հարցեր. ինչի՞ մասին է պատմվում այս հատվածում, ինչ՞ է նշանակում այս բառը, ինչպե՞ս եք դուք հասկանում այս նախադասության իմաստը: Սովորողների պատասխանները պետք է լինեն ամբողջական, իսկ եզրակացությունները՝ փաստաթղթից վկայակոչումներով:[16]

6-7-րդ դասարաններում սովորողները պետք է կարողանան տարբերակել պատմավավերագրական աղբյուրները գեղարվեստական ստեղծագործություններից,

---

[15]Глазырина Т.Н., с.120:

[16]Вагин А. А., с.278:

երգերն ու հեքիաթները՝ առասպելներից: Այսպես, հին հունական առասպելները ուսումնասիրելիս սովորողներին պարզ է դառնում, որ այնտեղ շատ բան մտացածին է, բայց իրականում նրա հիմքում ընկած է այն, ինչ տեղի է ունեցել հույների կյանքում: Այդպես են ստեղծվել ժողովրդական բոլոր էպոսները:[17]

Փաստաթղթի արտահայտչականությունը մեծանում է, երբ հաջողվում է միավորել նրա բովանդակությունը ցուցադրման հետ:

Փաստաթղթերի խնդիրներից մեկն էլ այն է, որ դրանք պետք է վեր հանեն այն հակասությունները, որոնք կան նրանց և դասագրքի նյութերի մեջ:

Հնարավոր է վավերագրական փաստաթղթի համապատասխանեցումը քարտեզի, իրավաբանական փաստաթղթի, օրագրերի, հուշագրությունների, այս կամ այն գործչի նկարի և այլնի հետ:

Առավել ճիշտ փաստաթղթի ընտրության հարցում ուսուցչին օգնում են քրեստոմատիայի գրքերը, որոնք պարունակում են փաստաթղթեր, մեկնաբանություններ, հատվածներ գիտահանրամատչելի գրականությունից և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՎԱՀԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄ ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու տեսանկյունից, ուղղակիորեն առնչվել պատմական այս կամ այն նյութին: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել, որպես դասագիրքը լրացնող միջոցներ: Դրանք զարգացնում են ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտություն, ձևավորում աշակերտի մոտ կարծիք-բանավեճ: Շատ հաճախ դասագրքերը մատուցում են պատրաստի գիտելիք: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնելու իմաստով:

---

[17]ВяземскийЕ.Е., СтреловаО.Ю., с.190:

Դպրոցական դասագրքում Վահանանց պատերազմ թեմանան անցնելիս նպատակահարմար է օգտագործել՝ Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատությունը,[18] Սեբեոսի «Պատմություն» աշխատությունը,[19] Մովսես Կաղանկատվացու «ՊատմությունԱղվանիցաշխարհի» աշխատությունը[20]:

Հռչակավոր «Հայոց պատմությունը» Ղազար Փաիպեցին գրել է իր մեծ մեկենասի՝ Հայոց մարզպան ու սպարապետ, Մամիկոնյան տոհմի տանուտեր Վահան Մամիկոնյանի պատվերով: Մեր պատմագրի սրտին անչափ մոտ է Վահանը: Նա ոչ միայն հայտնի դարձավ իր քաջագործություններով ու բարենորոգումներով, այլև անմահացրեց իր անունը՝ ստանձնելով պատմական այս կարևոր գործի մեկենասությունը: Ճիշտ է, սկզբում Փարպեցին համեստորեն դժգոհում է, որ Վահանը կարգադրել է իր «ուժից վեր» մի երկ գրել, սակայն հետո այդ քայլի համար անչափ գովում ու բարձրացնում է Մամիկոնյան իշխանին[21]:

Շատ կարևոր է ուսուցչի նախնական աշխատանքը սկզբնաղբյուրների հետ, կատարում է սկզբնաղբյուրի վերլուծություն, ընտրում է որոշակի հատվածներ տարբեր սկզբնաղբյուրներից, որոնք հետագայում մեջբերում է դասը ներկայացնելու ժամանակ, որպեսզի հիմնավորի իր պատմածը:

Նոր դասին անցնելուց առաջ ամփոփում ենք անցած դասը հարց – պատասխանի միջոցով: Այնուհետև անցնում ենք նոր դասը ներկայացնելուն: Սկզբում ներկայացնում ենք Վարդանանց պատերազմից հետո երկրում ստեղծված իրավիճակը և նշում, որ պարսից արքունիքը առժամանակ շարունակեց հայերի սիրաշահելու քաղաքականությունը: Սակայն որոշ ժամանակ անց Պերոզը նորից սկսում է հալածանքները: Այս մասին կարող ենք իմանալ Սեբեոսի աշխատությունից, համապատասխան հատվածը հանձնարարում ենք սովորողներից մեկին կարդալ. «Եվ պարսից Պերոզարքայի տարիներին տեղի ունեցավ ամենայն իշխանությունների և քրիստոնեության օրենքների ու կարգերի վերացում, և իշխանների վրա քամահրանքների և հալածանքների այնպիսի տագնապալի վտանգ կախվեց, մինչև որ

---

[18]Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 270-400:

[19]Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005,էջ 41-45:

[20]Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանիցաշխարհի, Երևան, 1969 ,էջ 5-15:

[21]ՂազարՓարպեցի, էջ 275:

դեն նետեցին իրենցից ծառայության լուծը: Եվ ապստամբելով՝ Վահան Մամիկոնյանը հալծեց պարսիկներին և ուժով ու բռնի կերպով գրավեց իշխանությունը»:[22] Հայրենասիրական ուժերը գլխավորում էին Վահան Մամիկոնյանը և Գյուտ կաթողիկոսը: Գյուտ կաթողիկոսի փորձերը կապեր հաստատելու Բյուզանդիաի հետ ավելի պատկերավոր դարձնելու համար Ղազար Փարպեցուց հանձնարարում ենք կարդալ հետևյալ հատվածը. «Նրանք (հայիշխանները) հավաքված նստել էին Հայոց սուրբ քահանայապետ Գյուտի մոտ, որը երբեք չէր դադարում մոխրասերների մոլորությունը լալուց և նրանց հետ գաղտնի մտմտում էր հնարեր հայթայթելու մասին. Երբեմն ուզում էր փախչել օտարություն, մեկ էլ մտածում էր օգնության խնդիրն ապահովել և ապստամբել: Մեկ, երկու անգամ էլ պատգամավորներին առաքեց Հունաց թագավոր Լևոնի մոտ , որը և թեպետ հանձն առնելով կամենում էր օգնել , սակայն ժամանակը ձգձգեց , և ծրագրերը խափանվեցին»[23]:

Դասի հաջորդ հատվածում մեջբերում ենք Գյուտի և ՎահանՄամիկոնյանի դեմ բանսարկությունը. «Չկարողանալով տանել (մախազ Գադիշոն) Հայոց սուրբ կաթողիկոս Գյուտի արհամարհանքները, թշնամությանան համար խոսքեր հերյուրելով՝ նրան ամբաստանեց Պրարսից Պերոզ թագավորի առաջ, ասելով, թե «Քո կամքն ու հրամանը կատարելու և քո օրենքներն ընդունելու և սիրելու ցանկություն ունեցող մարդկանց կանչում է իր մոտ ու, ոմանց կաշառելով, ոմանց էլ քաղցր խոսքերի պատրանքով, այդ գործերից հեռացնում է: Եվ ինքն էլ կայսեր հետ է բանակցում, պատվական ընծաներով հպատակվել է նրան ու նրա արքունիքի մեծամեծներին»»[24]:

Ընթերցելուց հետո ներկայացնում ենք Գյուտ կաթողիկոսի կանչվելը Տիզբոն, որտեղ Գյուտը արդարացնում է իրեն և մերժում դավանափոխ լինելու առաջարկը, որպեսզի ավելի պատկերավոր լինի կարող ենք այդ երկխոսությունը ներկայացնել դերային խաղի միջոցով: Նախօրոք թղթերի վրա գրվում ենք խոսքերը և դասարանից երկու հոգու հանձնարարվում է տեղում ծանոթանալ տեքստին, այնուհետև երկուսով

---

[22]Նույն տեղում, էջ 277:

[23]Նույն տեղում, էջ 279:

[24]Նույն տեղում, էջ 281:

մոտենում են գրատախտակին և փորձում դերային խաղի միջոցով ներկայացնել երկխոսությունը: Այն ունենալու է մոտավոր հետևյալ կառուցվածքը.

Գյուտ- «Իմ մասին մաղխազի ձեզ մոտ ասածներիցո՛ ոչ բոլորն են սուտ. Կան բաներ, որ ճիշտ են և կան, որ ոչ լրիվ են ճիշտ: Ճիշտ է, որ սիրում եմ քրիստոնեությունը և նրա՛ն, ով քրիստոնյաէ: Իսկ որ ասում են, թե երթևեկում եմ հոռոմների հետ, ապա իրակաությունը դրանց կարծածների պես չէ, ուրեմն և՝ սուտ են ասում: Իսկ իշխանությանը հնազանդվելու մասին կասեմ, որ մեր օրենքներն իսկ պատվիրում են արժանին մատուցել տերերին, իմաստուններին ու արժանավորներին»:

Պերոզ- «Մինչև այժմ դուք քո իշխանությունը վարել ես առանց իմ հրամանի. և ծառա մարդիկեն , որ քեզ այդքան մեծ պաշտոն են տվել, իսկ ինձնից ինքդ դեռևս վստահություն չունես: Բայ ցայժմ, եթե կատարես իմ կամքը, իմ օրենքն ընդունես և արեգակին երկրպագես, հրովարտակով քեզ կտամ այդ պաշտոնը քո ազգի վրա և էլի ո՛ւմ վրա ինքդ կամենաս, որ ունենաս հավիտյանս: Եվ քեզ Հայաստան կուղարկեմ այնպիսի պատվով, որպիսի պատիվ և շքեղություն դեռևս ոչ մի հայ չի ստացել մեր արքունիքից: Իսկ թե համառելով չհամաձայնես կատարել իմ կամքը, եպիսկոպոսությունդ կխլեմ քեզանից, պաշտոնիցդ կհեռացնեմ, և դու անարգված ու ծաղրված կվերադառնաս քո տունն ու աշխարհը»:

Գյուտ- «Այն պաշտոնը կամ գործակալությունը, որ կարծում ես, թե ստացել եմ ծառայից ու ոչ թե քեզանից, և որ դու կամ քո ծառաներից որևէ մեկը տալով, նաև կառնեք ինձանից՝ ուրախ կլինեմ և այդ էլ կամենում եմ, որովհետև դրանով կազատվեմ աշխարհատանջ հոգսից ու կարիքներից և իմ անձավում աղոթքներով կզբաղվեմ: Սական քո օրենքները, որոնք ինձ հրամայում ես ընդունել, որի համար էլ խոստանում ես ինձ տալ պատիվներ ու պարգևներ, ապա երկրավորներից ո՛չ ոք չունի առավել մեծ պատիվ ու իշխանություն, քան քո ունեցածն է: Եվ քո պատիվներն ու փառքերն անարգանք եմ համարում, մանկական ծաղր ու կատակներ»:

Պերոզ - «Անհնար է, որ չկատարվեն այն պահանջները , որ նա է կամենում: Սակայն ես քրիստոնյաներին հնարավորություն չեմ տա, որ նրա կապանքները համբուրեն կամ երկրպագեն նրա ոսկորներին ՝ըստ իրենց սովորության: Լսել եմ նրանց պաշտամունքի մասին՝ որն ապրողներին չի արժանացնում այնպիսի պատվի, որով այդպիսի մեռելին են տալիս: Բայց ես իրեն չեմ արժանացնի այն պատվին, որն

ինքն է ցանկանում՝ ինձ այսպես զայրացնելով: Կգնաս ու կապրես ուր ցանկանաս, բայց պաշտոնից հեռացված ես, և այն այլևս քոնը չէ »[25]:

Այնուհետև ներկայացնելու ենք Արևելյան Վրաստանում պարսիկների դեմ ապստամբությունը: Տվյալ դեպքերի վերաբերյալ համձնարարում ենք կարդալ Ղազար Փարպեցուց համապատասխան հատվածը. «Վրաց աշխարհում հանկարծակի խռովալից հուզումներ եղան: Վախթանգն անօրեն բդեշխ Վազգենին սպանեց Պերոզ արքայի քսանհինգերորդ տարում: Իսկ քրիստոնյա հայ մարդիկ, որ այն տարի այնտեղ կռվի մեջ էին, ավելի շատ վիրավորուվում մաշվում էին ուրացությամբ այն ժամանակ անբարեհաճ դարձան Հայոց ետին իշխանների արհամարհանքներից ու նախանձությունից, քան թե պարսիկ զորագլուխների բռնի գործողություններից: Եվ նրանք այն ժամանակ, երբ իմացան Վրաց արքայի ապստամբության մասին, ուրախալից սրտով երջանկացան»[26]:

481թ հայ նախարարների Շրիակում կատարած որոշման մասին և հետագա իրադարձությունների վերաբերյալ սկզբնաղբյուրից բերումենք հետևյալ հատվածը. «Եվ այսպես գիշերը երդվելով ու հաստատվելով Քրիստոսի հավատի մեջ, հրաժեշտ տվին միմյանց, և յուրաքանչյուրն իր կացարանը գնացին քնելու: Տեղնուտեղը Հայոց նախարարներից մեկը, որի անունն էր Վարազ- Շապուհ, Ամատունյաց տոհմից, ելնելով միաբանության խորհուրդից, ինչպես Հուդան էր բաժանվել սուրբ առաքյալների խմբից, նույն գիշերը գնաց մարզպանին ու բոլոր մյուսներին պատմեց միաբանության խորհուրդը. և՛ երդումն Ավետարանի վրա, և՛ Հայոց բոլոր նախարարների խոսքերը: Եվ երբ լսեցին մարզպան Ատրվշնասպը, այլ պարսիկ մարդիկ ու հայուրացածների ջոկը, սրտակոտոր զարհուրեցին և գիշերվա մնացած մասը երկյուղից անքուն անցկացրին: Առավոտյան ժամին հասնելով՝ նրանք հեռացան այնտեղից և գնացին բանակ դրին Անի կոչված բերդի պարսպի մոտ: Աղետի վերաբերյալ խաբեության խրատ տվողներն ու մարզպանը կասկածամտությամբ ամբողջ օրն այնտեղ անցկացրին: Ապա ուրիշներին ստույգ տեղեկացնելով, թե վաղը ևս այնտեղ են լինելու, նույն գիշերում մարզպանը, հազարապետն ու նրանց հետ միաբանող մյուսները հեծան իրենց երիվարները և փախուստի դիմեցին: Հայոց

[25]Նույն տեղում, էջ 285:

[26]Նույն տեղում, էջ 287:

նախարարներն այդ իմանալով՝ հետապնդեցին փախստականներին, բայց քանի որ մարզպանն ու հազարապետը փախչում էին տեղյակ առաջնորդների հետ, գնացին ոչ թե ուղիղ ճանապարհով, այլ զանազան տեղերով և փրկվելով ընկան Արտաշատի բերդը: Հայոց նախարարները չկարողացան հասնել նրանց, բայց պարսիկների բոլոր գրաստները բռնեցին ճանապարհին և մաղխազ Գադիշոյին էլ ձերբակալելով վերցրին իրենց հետ: Հասան Դվին, այնտեղից էլ գնացին ու պաշարեցին Արտաշատի բերդը: Իսկ մարզպանն ու հազարապետը գիշերը գաղտնի ելան բերդից, փախան-գնացին Ատրպատականի կողմերը»:

Հաջորդ հատվածում ներկայացնում ենք Ակոռի ճակատամարտը, այն ավելի տպավորիչ և հասկանալի դարձնելու համար նորից մեջբերու մենք կատարում Փարպեցուց. «Չորսհարյուրը չորս մասի բաժանելով, այն ժամ միջի մասի զորագլուխներ կարգեցին Սյունյաց իշխան Բաբգենին և Մամիոնեից քաջ սեպուհ Վասակին, ձախակողմում՝ մաղխազ Գարջոյլին,իսկ աջակողմում՝ երկու Գնունիերին՝ Գնունյաց իշխան Ատոմին ու նրա եղբայր Առաստոմին, իսկ երկու մասերի արանքում դասավորեցին Շիրակի քաջուրնտիր Ներսեհ Կամսարականին ու նրա եղբայր Հրահատին իրենց զորքերով: Հերոսական Ներսեհ Կամսարականը հասնելով նիզակահարեց ու սպանեց Կատշաց զորագլխին, որ մի հզոր ու քաջամարտիկ այր էր, և մնացած ամբողջ զորքն առջևից քշելով պատերազմում ընկած »[27]:

Դասի հաջորդ հատվածը որը անհրաժեշտ է լուսաբանել սկզբնաղբյուրից բերված հատվածով դա՝ Ճարմանայի ճակատամարտն էր: Բերված հատվածը լուսաբանելու է թե՝ ի՞նչն էր պատճառը, որ հայոց զորքերը պարտություն կրեցին Ճարմանայի ճակատամարտում. «Նրանք շուտափույթ կերպով դեսպան ուղարկեցին Վրաց Վաղթանգ թագավորի մոտ, որպեսզի նա, իր խոստման համաձայն հոն զորք տա իրենց: Սա էլ ժամավաճառ խոսքերով ձգձգում էր իր անելիքը, հետո էլ ինչ-որ մի երեքհարյուր հոն և ուղարկեց Հայաստան: Եվ մեռվանից մեկ ամիս չանցած ինչ-որ պատճառաբանությամբ փութով նրանց վերստին իր մոտ կանչեց: Եվ հայոց աշխարհին մնաց օգնական Քրիստոսի զորությունը, որին ապավինել էին հույսով, իսկ մարդկանցից ոչ ոք չկար, ո ոօգներ նրանց»:

[27]Նույն տեղում, էջ 291:

Դասի կարևոր հատվածներից է նաև Պերոզի արշավանքը հեփթաղների դեմ և նրանց կողմից սպանվելը, այս մասին մեջբերում ենք Սեբեոսի «Պատմությունը» աշխատությունից. «Իսկ պարսից Պերոզ արքան, թեպետև կրկին կամեցավ զորքեր գումարել Հայոց աշխարհի վրա, սակայն ժամանակ չգտավ, քանի որ քուշանների կողմից և այն մարզից թշնամիների մասին լուրերը տագնապեցրին նրան, քանզի ինքն իսկ՝ քուշանների արքան մեծ զորքով շարժվել գալիս էր նրա վրա:

Եվ նա գումարելով իր զորքերը, մեծ փութով գնաց նրանց ընդդեմ: Ասաց. «Գնամ նախնառաջ քշեմ նրան, ապա մի ազատ պահի դարձյալ կգնամ Հայաստան, ու իմ սուրը չի՛ խնայի նրանց՝ և՛ տղամարդկանց, և՛ կանանց»:

Եվ ինքն, առաջ շարժվելով, փութով հասավ թշնամու դեմ արևելքում, և սաստիկ պատերազմ եղավ. Կոտորեցի և ջախջախեցին պարսից զորքերի բազմությանը: Մեռավ պատերազոմում նաև Պերոզ արքան յոթ որդիներով հանդերձ»[28]:

Հաջորդիվ ներկայացնելու ենք Նվարսակի պայմանագիրը և Վահան Մամիկոնյանի մարզպանի պաշտոնում հաստատումը: Այս իրադարձությունների մասին մանրամասն տեղեկություններ իմանում ենք նորից Ղազար Փարպեցու աշխատությունից. «Եվ թագավոր Վաղարշն այսպիսի օրինակելի խոսքեր լսեց Միհրանից, Հազարավուխտից ու Այրաց ամբողջ ավագանուց: Հետո նրանք բոլորն էլ գովեցին Միհրանի ասածը, թե արդարև այդպես է, ինչպես որ քաջ իմաստությամբ նա ասաց ճշմարտությունը: Ապա վաղվաղակի ու շտապ Նիխոր Վշնասպդատին՝ այդհեզ, խելոք ու աշխարհաշեն մարդուն, շատ ընտի մրարդկանց հետ, ուղարկեցին Հայք: Թագավորն ինքը, առավելապես Հազարավուխտի և արքունիք իավագանու հոգաբարձությամբ, նրան պատվիրեց, թե. «Գնա Հայք, և ինչ օրինակով էլ լինի, ամենայն քաղցրությամբ ու սիրով, ըստ Վահանի ու նրա ընկերակիցների կամքի, նվաճիր, ծառայության տակ դիր: Սակայն զգույշ եղիր, որ նախ քո շուրջը հավաք ես Հայքի մոտ գտնվող Ատրպատականի այրուձին, ինչպես նաև Հեր ու Զարավանդ գավառի հեծելազորը: Գուցե դու մարդ ուղարկես Վահանի մոտ, և նա պատրվակներով քեզ հետ քաղցրխոսի, քեզ խաբի ու որևէ վնաս հասցնի: Որովհետև

[28]Սեբեոս, էջ 45:

ինքը քաջ մարդ է և խորամիտ դրա համար էլ մինչև այժմ նա ու իր հետ եղածներն այնքան մեծ գործերը կատարել են ոչ միայն քաջությամբ»:

Հայոց աշխարը գնալով՝ Նիխորը չհամարձակվեց խորանալ Հայքի գավառները այլ մնաց Հեր կոչված գավառի մի գյուղում, որի անունն է Նվարսակ: Նա Վահան Մամիկոնյանի մոտ դեսպաններ ուղարկեց խորհուրդի դպիր Շապուհին և Ճվարշացի Միհր-Վշնասպին, որոնց միջոցով հայտնեց իր Հայք գալը և թե «Հրովարտակ ունեմ Վաղարշ թագավորից՝ ուղղված ձեզ, որպեսզի խաղաղությամբ նվճեմ ձեզ և Այրաց բոլոր ավագներից էլ պատգամում եմ ձեզ հաղորդելու: Արդ, եկե՛ք, լսեցե՛ք և, ի՛նչը ձեզ հաճելի ու բարի կհամարեք, այն էլ կընտրեք»»:

Այսպիսով կնքնվում է Նվարսակի պայմանագիրը որը ուներ հետևյալ կետերը «Այդ երեքից մեկը նախ և առաջ այս կարևոր և պիտաի խնդին է. Որ մեր հայրենի և բնիկ օրենքները մեզ թողնեք, հայոց մի մարդու մոգ չդարձնեք, մոգության համար ոչ ոքի գահ ու պատիժ չտաք, կրակարանը Հայոց աշխարհից հեռացնեք, աղտեղի ու անպիտան մարդկանց կողմից եկեղեցուն հասած խայտառակությունները, որ մինչև այժմ եղել են այսուհետև չլինեն, քրիստոնյա մարդկանց և քահանաներին թույլ տաք քրիստոնեական կարգն ու պաշտոնը համարձակ և աներկյուղ կատարել՝ որը որ կամենան: Ուրեմն բարի է, և այդ է մեր առաջին խնդիրը»:

«Երկրորդ խնդիրն այս է. Որ մարդուն ճանաչեք ոչ թե իշխանաբար, այլ արդարությամբ իմնանք լավն ու վատը, ընտրեք պիտանի ու անպիտանը ճանաչեք տոհմիկին ու անտոհմիկին, քաջ ու օգտակար մարդկանց պահեք լավերի ու պատվականների մեջ, արհամարհելով ոչնչի՛ տեղ դնեք վատին ու անպիտանին, սիրեք վաստակավորներին և ատեք անվաստակներին, իմաստուններին, մոտ պահեք և նրանցից խորհուրդներ առեք, անմիտին մոտ չնդունեք, այլև հրապարակից հալածեք: Եվ երբ որ այս ամեն բաներն այսպես լինեն, Այրաց աշխարհի բոլոր գործերը կգնան հաջողակ ու անսխալ: Իսկ թե հակառակը սիրեք, ինչպես որ մինչև այժմ է եղել ապա վիճակն ու գործերն էլ այդպես հակառակը կլինեն, ինչպես որ եղել է և դուք տեսաք»:

«Մեր երրորդ պահանջն այն է: Ով Այրաց աշխարհի տերն ու թագավորն է, ցանկանում ենք որ ի՛նքն իր աչքերով տեսնի, ի՛նքը լսի ի բականջներով, ի՛նքը ճանաչի, ի՛նքը խոսի իր բերանով և ոչ թե ուրիշի աչքով տեսնի, ուրիշի ականջով լսի,

ամեն օրուրիշի միջոցով մարդկանց լավ կամ վատ ճանաչի և ուրիշի բերանով ասի՝ինչ-որ պետք է »[29]:

Այսպիսով ավարտելով դասի ժամանակ սկզբնաղբյուրների հետաշխատանքը, սովորողներին հանձնարարում ենք տնային առաջադրանք, տանը կարդալ սկզբնաղբյուրները և պատրաստել զեկուցում կատարած աշխատանքի վերաբերյալ:

[29]Ղազար Փարպեցի , էջ 387

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ի մի բերելով քննության արդյունքները կարող ենք եզրակացնել՝

- Պատմության դասավանդման ընթացքում սկզբնաղբյուրների օգտագործման նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք կոչված են խորացնելու, որոշակիացնելու և սովորողների կողմից յուրացվող գիտելիքներին տալու կենդանի պատկեր, հասկանալու պատմական դարաշրջանի առանձնահատկությունները և ծանոթանալու նրա ուսումնասիրման մեթոդների տարրերին, որոնք կիրառվում են պատմական գիտության մեջ:
- Փաստաթուղթը ուսուցչի կողմից դասի պարզաբանումը դարձնում է կենդանի ու վառ, իսկ եզրակացությունները կայուն և համոզիչ:
- Սովորողների կողմից սկզբնաղբյուրների հետ աշխատանքը նպաստում է պատմության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանն ու աճին: Պարզ է դառնում, որ նոր փաստաթղթերի ընդգրկումը պատմության դասին հնարավորություն է տալիս նրանց զգալու ժամանակի ոգին:
- Կատարելով եզրահանգում կարող ենք հստակորեն նշել, որ սկզբնաղբյուրների հետ աշխատանքի ընթացքում սովորողների մոտ ձևավորվում են ինքնուրույն աշխատանքի հմտություններ՝ դատողություն, կարդալ թաստաթղթեր, վերլուծել տեղեկատվությունները, գնահատել անցյալի փաստաթղթերի դերը ներկան և ապագան հասկանալու համար:
- Ներկայացնելով սկզբնաղբյուրների դերը «Վահանանց պատերազմը» թեման ուսումնասիրելու ժամանակ եկանք այն եզրակացությանը, որ այս թեման անհրաժեշտ է անցկացնել սկզբնաղբյուրների օգտագործմամբ: Քանի որ դասի մեջ կան բազմաթիվ կարևոր իրադարձություններ, որոնք անհրաժեշտ է լուսաբանել սկզբնաղբյուրներից բերված հատվածներով: Դասին սկզբնաղբյուրներից բերված հատվածներով կազմակերպվեց նաև դերային փոքրիկ խաղ, որը ավելի ակտիվացրեց սովորողներին, նրանք ավել հետաքրքրությամբ հետևեցին դասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ:

1. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, 529 էջ:
2. Պատմություն Սեբեոսի, Երևան, 2005,445 էջ:
3. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969,321 էջ:

ՈՒսումնասիրություններ:

1. ՊապոյանՀ.Գ., Պատմության դասավանդման մեթոդիկա դպրոցում, Երևան, 2013, էջ 304:
2. Ղևոնդյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001, էջ 250:
3. Вагин А.А, Методикапреподаванияисториивсреднейшколе, Москва, 1968,с. 434.
4. Вяземский Е.Е, СтреловаО.Ю., Теорияиметодикапреподавания истории, Москва, 2003, с. 382:
5. Студеникин М.Т., Методика преподавания истории в школе, Москва, 2000, с.226.
6. Глазырина Т.Н., Методика преподавания истории, Новополоцк, 2011, с. 305